Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Գավառ ***21.10.2020թ. ժամը 20:00***

Նախագահում էր Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 57 անդամներից 55-ը:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Նարեկ Մանուկյանը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Տիգրան Հակոբյանը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի իրավապահ մարմինների ներկայացուցիչները:

Օրակարգում՝

1. **2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պայմաններում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և մարզի համայնքների կողմից իրականացվող կազմակերպչական աշխատանքների կանոնակարգման և փոխհամագործակցության մասին:**

2. **Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի 21 հոկտեմբեր 2020 թվականին հայ ժողովրդին ուղղված կոչի մասին:**

Մարզի խորհրդի նիստը վարեց և աշխատանքներն ամփոփեց մարզպետ Գնել Սանոսյանը:

Առաջարկվեց՝

1. **Մարզի համայնքների ղեկավարներին՝**
   1) **ռազմական դրությամբ պայմանավորված խստագույնս ապահովել բնակչության անվտանգությունը և սերտորեն համագործակցել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ու պետական այլ մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ:**
   2) **համայնքներում ձևավորել կամավորական ջոկատներ՝ համագործակցելով զինվորական մարմինների հետ, ապահովել կամավորականների մասնակցությունը ուսումնական վարժանքներին, ինչպես նաև աջակցել ՋՈՒ և ՋՀԾ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանմանը՝ զորահավաքային ռեսուրսների հավաքագրման գործընթացում:**

Восстановимая подпись

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ